ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱՊԱԼԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ԱՇՈՏ ԵՆԳՈՅԱՆ

Կուսակցության XXVII համագումարը մեր երկիրը կողմնորոշեց դեպի տնտեսական նոր մեխանիզմի կառուցման ուղին, որի հիմքում ընկած է ձեռնարկությունների, տնտեսությունների և միավորումների իրավունքների ընդլայնումը։ Սակայն, ինչպես նշվեց համագումարում, այդպիսի համակարգից պատշաճ հատույց կստացվի միայն այն դեպքում, եթե նրա սկզբունքները «թափանցեն արտադրության բոլոր օղակները՝ ընդհուպ մինչև բրիգադները և աշխատատեղը»[1]։ Այդ խնդրի լուծման գործում համագումարը մեծ նշանակություն տվեց աշխատանքի կազմակերպման կապալային ձևի արմատավորմանը[2]։

Կոլեկտիվ կապալի տնտեսական իմաստն այն է, որ աշխատավորական կոլեկտիվը պարտավորվում է կատարել գյուղատնտեսական կուլտուրաների մշակության, անասունների խնամքի, շինարարական, վերանորոգման և այլ կոմպլեքս աշխատանքներ՝ տնտեսության (ձեռնարկության) հետ կնքված փոխադարձ համաձայնության հիման վրա, որը ձևակերպվում է դրանց միջև որոշակի ժամկետով պայմանագրի կնքմամբ։ Այդ առաջադրանքը կազմվում է հաշվի առնելով գյուղատնտեսական մթերքների արտադրության նախորդ հինգ տարիներին ձեռք բերած մակարդակը և սահմանում է աշխատավարձի ֆոնդը, ամսական կանխավճարը, համախառն արտադրանքի ծավալը, արտադրանքի պլանային ինքնարժեքը և բոլոր տեսակի ծախսումների համար համապատասխան լիմիտը։ Տնտեսությունը (ձեռնարկությունը) իր հերթին պարտավորվում է կապալային կոլեկտիվին ժամանակին տրամադրել անհրաժեշտ միջոցներ և պայմաններ ստեղծել նրա աշխատանքային գործունեության համար, ինչպես նաև նախօրոք ընդունած պայմանների և գնահատման համաձայն վճարել։ Կապալային ստորաբաժանումներն աշխատում են ժամանակավարձային ավանսավորմամբ, ակորդապարգևատրային վարձատրության համակարգով, որը, ի տարբերություն աշխատանքի վարձատրության գործարքային եղանակի, սերտ կապվում է վերջնական արդյունքի հետ։ Այս դեպքում աշխատողները վարձատրվում են ոչ թե գյուղատնտեսական առանձին աշխատանքների, այլ փոխադարձաբար կապված աշխատանքների ամբողջության համար։ Տարվա ընթացքում կոլտնտեսականները և սովխոզների բանվորները կատարված աշխատանքի համար կանխավճարի կարգով, տարիֆային դրույքի 100%-ի չափով, ստանում են աշխատավարձ։ Մնացած աշխատավարձը տրվում է տարեկան արդյունքների ամփոփումից հետո։ Արտադրական ստորաբաժանումների անդամների միջև կոլեկտիվ աշխատավարձը բաշխվում է ընդհանուր արդյունքի մեջ նրանց յուրաքանչյուրի ներդրածի հաշվով։ Պարգև վճարվում է պլանից դուրս տրված արտադրանքի արժեքի 20—30%-ի չափով։ Կոլեկտիվ կապալի սկզբունքով աշխատանքի կազմակերպման եղանակը նպաստում է տնտեսական խնդիրների լուծման գործում սկզբնական կոլեկտիվների պատասխանատվության և ինքնուրույնության բարձրացմանը, դրանցում ինքնակառավարման

---

1 «Սովետական Հայաստան», 4. III. 1986։

2 Նույն տեղում։

զարգացմանը, խթանում է կոլեկտիվի անդամների շահագրգռվածությունն աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում, ակտիվացնում է, այսպես կոչված, մարդկային գործոնը և յուրաքանչյուրն իր տեղում աշխատում է բարեխղճորեն։

Բելգորոդում կայացած համամիութենական խորհրդակցությունում (1983 թ., մարտ), որը նվիրված էր կոլեկտիվ կապալի արմատավորման հարցերին, Մ. Ս. Գորբաչովը նշեց, որ կոլեկտիվ կապալով աշխատող ստորաբաժանումները «գտնվելով միանման պայմաններում, մեկ միավոր հողատարածությունից սիստեմատիկաբար ստանում են 20—30%-ով ավելի շատ արտադրանք։ Այդպիսի կոլեկտիվներում զգալիորեն բարձր է աշխատանքի արտադրողականությունը, ցածր է արտադրանքի ինքնարժեքը և, հետևաբար, շատ ավելի լավ է ներդրումների փոխհատուցումը»[3]։ Այդպիսի եզրակացության է հանգեցրել երկրի տարբեր մարզերում, երկրամասերում ու շրջաններում կուտակված փորձը։

Նկատի ունենալով երկրում կուտակված դրական փորձը, ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն 1983 թ. մարտին որոշում ընդունեց երկրի կոլտնտեսություններում և սովխոզներում կոլեկտիվ կապալը լայնորեն ներդնելու վերաբերյալ[4]։

Հետաքրքիր փորձեր, գյուղում աշխատանքի կազմակերպման և վճարման հեռանկարային եղանակների որոնումներ են կատարվել նաև մեր հանրապետությունում։ Կոլեկտիվ կապալը դեռևս 1973 թ. արմատավորվել է Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղի կոլտնտեսությունում։ Այստեղ արդեն 1974 թ. երեք կապալային օղակների ամբողջությամբ վստահվեց բուսաբուծությունը։ Դրա շնորհիվ տաս տարվա ընթացքում կոլտնտեսությունում բուսաբուծությունից ստացված զուտ եկամուտը 6 հազարից հասավ 231 հազար ռուբլու։ 1983 թ. աշխատանքի ժամանակավարձային ավանսավորմամբ ակորդապարգևատրային վարձատրությամբ աշխատել են Վարդենիսի շրջանի ավելի քան 900 ծխախոտագործներ։ Հաջողությամբ են աշխատել նաև Հրազդանի շրջանի հանրային ֆերմաների տնտհաշվարկային կոլեկտիվները։ Կոլեկտիվ կապալի արդյունավետությունը ապացուցվել է նաև Արագածի շրջանի Միլքարի ու Գեղարոտի սովխոզներում[6] և այլ շրջանների տնտեսություններում։ Մեր երկրում աշխատանքի կազմակերպման և խթանման առաջավոր ձևի արմատավորման փորձը ցույց է տվել, որ կոլեկտիվ կապալն ակտիվորեն տարածվում և արդյունավետ գործում է հատկապես այն ժամանակ, երբ կուսակցության շրջկոմների, սկզբնական կազմակերպությունների կողմից լուրջ օժանդակություն է ստանում։ Վերջին երկու տարիներին հանրապետության կուսկազմակերպությունները որոշակի աշխատանք են կատարել կոլեկտիվ կապալի արմատավորման ուղղությամբ։ Կոլեկտիվ (բրիգադային, օղակային, ընտանեկան) կապալը հաջողությամբ արմատավորվում է Էջմիածնի, Ախուրյանի, Հրազդանի, Իջևանի, Վարդենիսի, Սիսիանի, Աբովյանի, Նաիրիի, Աշտարակի և մի շարք այլ շրջաններում[7]։ Այս շրջանների կուսկազմակերպություններն աշխատանքի կազմակերպման առաջավոր ձևի արմատավորման զգալի փորձ են կուտակել։ Դա վառ երևում է Էջմիածնի շրջանի կուսկազմակերպությունների գործունեությունից։ Շրջանում կոլեկտիվ կապալի լայն արմատավորմանը նախորդել է քաղաքական և բացատրական մեծ աշխատանք։ Այդ ուղղությամբ զգալի դեր է խաղացել կուսակցության շրջկոմի և շրջսովետի գործկոմի օրգան «Կոմունիզմի ուղիով» թերթը, որը ընթերցողներին ծանոթացրել է երկրում կոլեկտիվ կապալի ար-

---

3 «Коллективный подряд на селе», М., 1983, с. 13.

4 «Սովետական Հայաստան», 11. III. 1983։

5 «Партийная работа на селе», М., 1984, с. 65.

6 «Коммунист», 7. IV. 1983.

7 «Կուսակցական խոսք», 1985, № 20, էջ 6։

մատավորման փորձին, նրա հիմնական սկզբունքներին։ Կուսակցության շրջկոմի և սկզբնական կուսակազմակերպությունների հանձնարարությամբ գյուղական աշխատավորության մեջ կազմակերպչական և բացատրական մեծ աշխատանք են տարել ագիտատորներն ու պրոպագանդիստները։ Շրջանում գյուղատնտեսական արտադրության մեջ կոլեկտիվ կապալի լայն արմատավորման վերաբերյալ որոշումն ընդունվել է կուսակցության էջմիածնի շրջկոմի բյուրոյի 1983 թ. մայիսին տեղի ունեցած նիստում։ Այդ որոշմամբ Կոլեկտիվ կապալի արմատավորման բազային տնտեսություն սահմանվեց Ոսկեհատի ուսումնափորձնական սովխոզը[8]։ Այստեղ աշխատանքի կազմակերպման և խթանման նոր ձևին առաջինն անցավ այգեգործական չորրորդ բրիգադը։ Այդ նույն տարում այն ստացավ տնտեսության միջին տնտեսական ցուցանիշներից 80 ցենտներով ավելի խաղող։ Մեկ ցենտներ խաղողի ինքնարժեքն այստեղ կազմեց 35ռ., իսկ մնացած բրիգադներում՝ 47։ Դրա շնորհիվ չորրորդ բրիգադի անդամների աշխատավարձը մյուս բրիգադների համեմատությամբ աճեց 160 ռուբլով[9]։ Կուսշրջկոմի բյուրոն, հավանություն տալով կապալային բրիգադի աշխատանքի փորձին, որոշում ընդունեց այն տարածել շրջանում[10]։ Ոսկեհատի ուսումնափորձնական սովխոզում 1984 թ. կապալի անցան ևս 4 բրիգադ, իսկ 1985 թ.՝ բոլոր 12 բրիգադները[11]։ Դա հնարավորություն տվեց զգալիորեն բարձրացնել գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը։ Այսպես, 1985 թ. տնտեսությունում յուրաքանչյուր հեկտարից հավաքվեց 140—160 ցենտներ խաղող, որը 20—40 ցենտներով գերազանցում է շրջանի միջին բերքատվությունը[12]։

Կոլեկտիվ կապալի լայն արմատավորման իր գործունեությամբ էջմիածնի կուսշրջկոմը ղեկավարվում է նրանով, որ այդ խնդիրը պետք է լուծվի տնտեսությունների բոլոր ղեկավարների, մասնագետների և գյուղական աշխատավորների համատեղ ուժերով։ Այդ նպատակով շրջկոմը պարբերաբար կազմակերպում է սեմինար-խորհրդակցություններ[13]։ Գյուղատնտեսության արտադրության մեջ կոլեկտիվ կապալի լայն արմատավորման նպատակով էջմիածնի կուսշրջկոմը 1984 թ. մայիսին շրջանային ագրոարդյունաբերական միավորման (ՇԱԱՄ) խորհրդին կից կազմակերպեց հանձնաժողով։ Այն կազմված է անասնաբուծության և բուսաբուծության բաժանմունքներից, որոնցում ընդգրկված են 5-ական մարդ։ Հանձնաժողովը գլխավորում է ՇԱԱՄ-ի խորհրդի նախագահը։ Բաժանմունքների նիստերը գումարվում են ամիսը երկու անգամ, իսկ հանձնաժողովինը՝ ամիսը մեկ անգամ[14]։ ՇԱԱՄ-ը ունենալով մեծ իրավունքներ, այդ հանձնաժողովի միջոցով օգնում է հաղթահարել կապալային ստորաբաժանումների աշխատանքային գործունեության մեջ եղած խոչընդոտները։ Դա առաջին հերթին վերաբերում է պլանավորման կատարելագործման հարցերին, ինչպես նաև արտադրության նյութատեխնիկական ապահովությանը։ Բացի այդ, ՇԱԱՄ-ը հանձնաժողովի միջոցով հետևում է տնտեսությունների ղեկավարության և արտադրական ստորաբաժանումների միջև պայմանագրերի կնքմանը, կողմերի պարտավորությունների կատարմանը, կոլեկտիվ կապալի հիմնական սկզբունքների պահպանմանը, տնտեսություններին տալիս է անհրաժեշտ հանձնարարություններ։ Հանձնաժողովի կազմակերպումից մեկ տարի անց աշխատանքի կազմակերպման անկարգագիր եղանակի անցան 42 բրիգադներ և 25 օղակներ

---

8 Էջմիածնի շրջսովետի գործկոմի ընթացիկ գործավարություն (այսուհետև՝ ԷՇԳԸԳ)։

9 «Коммунист», 4. IX. 1985.

10 ԷՇԳԸԳ։

11 «Коммунист», 4. IX. 1985.

12 Նույն տեղում, 5. X. 1985։

13 ԷՇԳԸԳ։

14 Նույն տեղում։

(6 անգամ ավելի արտադրական ստորաբաժանումներ, քան նախորդ տարում)[15]։

Էջմիածնի շրջանի փորձը ցույց տվեց, որ կոլեկտիվ կապալի արմատավորման հանձնաժողովները հնարավորություն են տալիս տարածել աշխատանքի կազմակերպման և խթանման առաջավոր եղանակը, հաշվի առնելով շրջանի տեղական առանձնահատկությունները։ Էջմիածնի կուսշրջկոմի և սկզբնական կուսկազմակերպությունների ջանքերի շնորհիվ 1986 թ. սկզբին շրջանի գյուղատնտեսության մեջ արդեն աշխատում էին 113 կապալային բրիգադներ և օղակներ։ Այդ ցուցանիշը կազմում է շրջանի գյուղատնտեսական ստորաբաժանումների 27,8%-ը[16] և հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 11,3%-ով[17]։ 1984 թ. համեմատությամբ, կապալային ստորաբաժանումների կողմից մշակվող գյուղատնտեսական հողահանգերի մակերեսը 1985 թ. աճեց մոտ 4,5 անգամ և կազմեց 2239 հա[18]։

Կապալային կոլեկտիվների ստեղծումն անհրաժեշտ է նախապատրաստել և ամրապնդել տնտեսական և սոցիալական միջոցառումներով։ Էջմիածնի կուսշրջկոմը, սկզբնական կուսկազմակերպությունները մեծ ուշադրություն են դարձնում այդ հարցին։ Այդպես է գործում Լենուղի գյուղի կոլտնտեսության կուսկազմակերպությունը։ Դա քննենք կոլտնտեսության № 2 կոմպլեքսային բրիգադի օրինակով։ Կապալային ստորաբաժանման համալրման ժամանակ առաջին հերթին հիմնավորվել է բրիգադի անդամների թիվը (14 մարդ), նվազագույն քանակ, որը թույլ է տալիս հաջողությամբ կատարել գյուղատնտեսական բոլոր աշխատանքները և դրանց ողջ ցիկլը։ Կոլտնտեսության կուսկազմակերպությունն ուշադրություն է դարձնում այն բանին, որպեսզի կոլեկտիվը չգործի սեզոնային, այլ ողջ տարվա ընթացքում։ Այդ նպատակով բրիգադի և կոլտնտեսության միջև պայմանագիրը կնքվում է մի տարի ժամկետով։ Բրիգադի գործունեության արդյունքների գնահատումը որոշվում է աշխատանքի արտադրողականության տեմպերի աճի հաշվառումով։ Կանխավճարի և վերջնական հաշվարկի ժամանակ հաշվի է առնվում բրիգադի յուրաքանչյուր անդամի աշխատանքային ներդրումը։ Կոլեկտիվի անդամները խրախուսվում են անմիջական ծախսերի տնտեսման համար, իսկ գերածախսի դեպքում նրանցից պահվում է գերածախսված միջոցների արժեքը[19]։ Այս ամենը կոլեկտիվին ստիպում է որոնել ապրանքների արտադրության բարձրացման համար ռեզերվներ՝ նյութական պաշարների նվազագույն ծախսումով։ Այսպիսով, կոլտնտեսության կուսկազմակերպությանն ու ղեկավարությանը լիովին հաջողվել է բրիգադում աշխատանքի վարձատրությունը կապել նրա գործունեության վերջնական արդյունքի հետ։ Դա հանգեցրել է աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում բրիգադի անդամների շահագրգռվածությանը, որը դրական է ազդել արտադրական ցուցանիշների վրա։ Այսպես, 1984 թ. յուրաքանչյուր հեկտարից բրիգադը ստացել է 62 ցենտներ ցորեն, որը շրջանում ռեկորդային է[20]։

Տնտեսություններում և շրջաններում, որտեղ կոլեկտիվ կապալին անցումը տեղի է ունենում տարերայնորեն, տնտեսապես և սոցիալապես չհիմնավորված, ստորաբաժանումները կա՛մ չեն ապահովում աշխատանքի բարձր արտադրողականություն, կա՛մ քայքայվում են։ Այսպես, օրինակ, Հոկտեմբերյանի շրջանում ուշադրություն չէին դարձրել վերջնական արդյունքով աշխատանքի էությանը։ Այստեղ կարծել էին, թե գլխավորը կապալային կոլեկտիվներ կազմակերպելն է, իսկ այնուհետև գործն ինքնիրեն կընթանա։

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում։

17 Գյուղատնտեսության մինիստրության ընթացիկ արխիվ (այսուհետև՝ ԳՄԸԱ)։

18 ԷՇԳԲԳ։

19 Նույն տեղում։

20 «Коммунист», 10. VIII. 1985.

Արդյունքը եղել էր այն, որ 1983 թ. ստեղծված 220 կապալային բրիգադներից 1985 թ. սկզբներին մնացել էր միայն մեկը[21]։ Այսպես եղավ նաև Մարտունու շրջանում։ 1983 թ. այստեղ ստեղծված 129 կապալային բրիգադներից 1985 թ. սկզբին ոչ մեկը չէր մնացել[22]։

Երկրի առաջավոր տնտեսությունների փորձը ցույց է տալիս, որ արտադրական պոտենցիալից առավելագույն փոխհատուցումը ստացվում է այն դեպքում, երբ կոլեկտիվ կապալի հիմքում ընկած է տնտհաշվարկի կիրառումը։ Հակառակ դեպքում կապալի տարածման գաղափարը դառնում է ձևականություն, որովհետև այդ պայմաններում հնարավոր չէ օգտագործել վերջնական արդյունքի նկատմամբ աշխատավորների շահագրգռվածության բարձրացման տնտեսական շատ լծակներ (ուղղակի ծախսումների, վերանորոգման միջոցների, վառելիքի և այլ նյութերի տնտեսման համար պարգևներ)։ Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ այն տնտեսություններում, որտեղ գոյություն չունի նյութական միջոցների հստակ հաշվառում, խոսել աշխատանքի կազմակերպման և վարձատրման կոլեկտիվ ձևերի առկայության մասին, նշանակում է վարկաբեկել կոլեկտիվ կապալ հասկացությունը։

Տնտհաշվարկի կիրառման կարևորությունը լավ են հասկացել Սիսիանի, Սևանի, Գորիսի և մի շարք այլ շրջանների կուսկազմակերպությունները։ Գործերն այլ կերպ են դասավորվել Թալինի և այլ շրջանների մի քանի տնտեսություններում։ Այսպես, օրինակ, գրանցում կապալային շատ ստորաբաժանումների համար չի կազմվել ծախսումների հաշվարկ։ Իսկ այնտեղ, որտեղ կազմվել է, չի կատարվել փաստացի ծախսումների հաշվարկ՝ ըստ գյուղատնտեսական կուլտուրաների[23]։

Կապալային ստորաբաժանումներում տնտհաշվարկի (ներտնտեսային հաշվարկի) կիրառման արդյունավետության մասին է խոսում Իջևանի շրջանի Աչաջրի սովխոզի օրինակը։ 11-րդ հնգամյակի առաջին երեք տարում սովխոզն աշխատել է վնասով։ Կուսակցական կազմակերպության նախաձեռնությամբ այստեղ 1984 թ. արմատավորվեց կոլեկտիվ կապալ, իսկ կապալային բոլոր ստորաբաժանումներն անցան տնտհաշվարկի։ Դրա շնորհիվ այդ նույն թվականին սովխոզը ստացավ 461 հազար ռ. եկամուտ, իսկ առանձին մթերքների արտադրության շահութաբերությունն աճեց 1,5—2 անգամ[24]։

Կապալային ստորաբաժանումներում տնտհաշվարկի արմատավորումը օգնում է լիովին բացահայտելու կոլեկտիվ կապալի բոլոր առավելությունները. բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը, իջնում է ապրանքի ինքնարժեքը, որն ազդում է կոլեկտիվի անդամների աշխատանքի վարձատրության վրա։ Դա գյուղի աշխատավորներին գրավում է դեպի նոր ձևը։ Արդյունքում ամրապնդվում են արդեն ստեղծվածները և ստեղծվում են կապալային նոր ստորաբաժանումներ։

Հակառակ պրոցեսին են հանգեցնում վերը նշված թերությունները, որոնք կոլեկտիվ կապալի տարածմանը կրկնակի վնաս են հասցնում։ Բանն այն է, որ առաջավոր ձևի արմատավորման պլանը շրջաններին իջեցվում է կապալային ստորաբաժանումների նախկին քանակով և շտապողականության պայմաններում անհրաժեշտ է լինում վերականգնել բացթողածը։ Դա իր հերթին տեղիք է տալիս նոր բացթողումների ու սխալների։ Մյուս կողմից, այն կոլեկտիվները, որոնք պատրաստվում են անցնել կապալի, տեսնելով արդեն ստեղծվածների տխուր վիճակը, հրաժարվում են դրա արմատավորումից։

Թերությունների վերացման և կոլեկտիվ կապալի հետագա տարածման հարցերը քննարկվել են ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի և քարտուղարության 1985 թ.

---

21 Նույն տեղում, 15. VIII. 1985։

22 Նույն տեղում։

23 «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1985, № 5, էջ 5։

24 «Կուսակցական խոսք», 1985, № 20, էջ 7։

հունիսին կայացած նիստերում։ Կենտկոմի բյուրոն և քարտուղարությունը նշեցին առկա թերությունների վերացման կոնկրետ ուղիները և առաջավոր ձևի հետագա արմատավորման գործում եղած հիմնական խնդիրները[25]։

Կոլեկտիվ կապալի տարածման գործում նյութատեխնիկական բազայի, արտադրության կազմակերպման ու ղեկավարման հարցերի հետ միասին կուսակցական շրջկոմները և սկզբնական կուսկազմակերպությունները մեծ նշանակություն են տալիս բարոյական ու հոգեբանական գործոններին։ Դրանցում առաջնակարգ դեր են կատարում կապալային ստորաբաժանումների համալրման կամավոր սկզբունքի պահպանումը, համերաշխ կոլեկտիվի ստեղծումը։ Այդ ուղղությամբ Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղի կոլտնտեսության կուսակցական կազմակերպությունը գործում է հետևյալ եղանակներով. մեխանիզատորական կադրերի անհատական ընտրություն, նրանց քաղաքացիական բարձր զգացմունքների դաստիարակություն, հասարակական կարծիքի նպատակաուղղված ձևավորում այն հարցի վերաբերյալ, թե ինչպես պետք է աշխատել հողի վրա[26]։ Այստեղ ոչ թե վերցնում ու անկարգագիր օղակներում միավորում են մարդկանց, այլ աշխատում են կոլեկտիվները համալրել համախոհներով։ Կոլտնտեսության կուսկազմակերպությունը դրա հետ մեկտեղ մեծ ուշադրություն է դարձնում այնպիսի գործոնի, ինչպիսին կոլեկտիվների անդամների բնավորությունների հոգեբանական համատեղելիությունն է, աշխատանքի նկատմամբ նրանց հայացքների ընդհանրությունը։ Մեծ ուշադրություն է դարձվում նաև կապալային ստորաբաժանումների անդամների հասարակական հետաքրքրություններին ու մասնագիտական վարպետությանը։ Հանրապետության այն շրջաններում ու տնտեսություններում, ուր այս հարցերին քիչ ուշադրություն է դարձվել, կա՛մ անկարգագիր կոլեկտիվներ ընդհանրապես չի հաջողվել կազմակերպել, կամ էլ դրանք քայքայվել են ստեղծվելուց 1—2 տարի հետո[27]։ Այժմ, երբ մեր երկրի առջև դրված նպատակները դարձել են ավելի մասշտաբային, կուսակցությունը հատուկ նշանակություն է տալիս մարդկային գործոնին։ Դրված նպատակներին հասնելու գործում անհրաժեշտ է ապահովել մասսաների շահագրգռված, պատասխանատու, գիտակցական և ակտիվ մասնակցությունը։ ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությամբ նշված է, որ «Սոցիալիստական հասարակությունը չի կարող արդյունավետ գործել, եթե մասսաների ստեղծագործական գործունեության զարգացման նոր ուղիներ չգտնի հասարակական կյանքի զարգացման բոլոր ոլորտներում»[28]։

Կոլեկտիվ կապալն ամեն կերպ նպաստում է աշխատավորների ստեղծագործական ակտիվության բարձրացմանը։ Դրան նպաստում է կապալային ստորաբաժանումներում կուսկազմակերպությունների կողմից գաղափարադաստիարակչական աշխատանքներ տանելը։ Սիսիանի շրջանում այդ հարցում մեծ դեր են խաղում բրիգադների և օղակների կուսակցական խմբերը։ Բացի տնտեսական խնդիրների լուծումից, դրանք ամենօրյա աշխատանք են տանում մարդկանց հետ։ Կուսխմբերը հավաքվում են կարճ ժամանակով և հարցերը ժողովում վճռում գործարար կերպով։ Ժողովներում կուսխմբերը քննարկում են կարգապահության ամրապնդման հարցեր, կոմունիստների հաղորդումները կանոնադրության պահանջների և արտադրական պարտավորությունների կատարման մասին։ Կուսակցական խմբերը պարբերաբար անցկացնում են բաց ժողովներ[29]։ Այժմ շրջանի համարյա բոլոր ստորաբաժանումներում ստեղծված են այդպիսի կուսակցական խմբեր։

---

25 «Սովետական Հայաստան», 22. VI. 1985։

26 «Коммунист», 26. V. 1983.

27 Նույն տեղում, 7. IV. 1983։

28 «Սովետական Հայաստան», 7. III. 1986։

29 «Партийная работа на селе», с. 67--68.

Կազմակերպական և դաստիարակչական աշխատանքի զուգակցման հետաքրքիր փորձ է կուտակել Գորիսի շրջանի Տեղ գյուղի սովխոզի կուսակցական կազմակերպությունը։ 1985 թ. գարնանը սովխոզի կուսակցական բյուրոյի և ագիտատորների բացատրական լայն աշխատանքի շնորհիվ ստեղծվեցին կապալային երեք մեքենայացված օղակներ, որոնց ամրացվեց 1250 հա հացահատիկային հողատարածություն[30]։ Չնայած առկա հաջողություններին, սովխոզի կուսբյուրոն իր աշխատանքն ավարտված չհամարեց։ Մեքենայացված օղակներում ստեղծվեց ագիտխումբ, որի կորիզը կազմեցին կոմունիստները։ Ագիտխումբը հասավ աշխատանքի վերջնական արդյունքի համար կոլեկտիվ պատասխանատվության բարձրացման, պայքարեց կարգապահության ամրապնդման համար, հոգ տարավ տնտեսավարության առաջավոր մեթոդների լայն արմատավորման մասին։ Դրա հետևանքով կապալային օղակները վերանայեցին իրենց նախնական պլանները և պարտավորվեցին ստանալ 3,5—4 հազ. տոննա ցորեն, որը 350—400 տոննայով ավելի էր, քան նախորդ տարում[31]։ Այսպիսով, ագիտխումբն իր նպատակաուղղված և հետևողական գործունեությամբ օգնեց կապալով աշխատող օղակներին՝ բացահայտելու նոր ռեզերվներ։

Մարդկային գործոնի ակտիվացման գործում կուսակցությունը մեծ նշանակություն է տալիս գյուղատնտեսական արտադրության մեջ երիտասարդ կադրերի ամրացմանը։ Կոլեկտիվ կապալի արմատավորումը թույլ է տալիս լուծել նաև այս հարցը։ Այսպես, 1984 թ. հանրապետության կապալային կոլեկտիվների մի զգալի մասում մեխանիզատորների միջին տարիքը 28 է եղել[32]։

Չնայած մի քանի շրջանների հաջողություններին, հանրապետությունում ամբողջությամբ վերցրած կոլեկտիվ կապալի տարածումը դանդաղում է։ Այսպես, օրինակ, 1985 թ. սկզբին հանրապետության գյուղատնտեսության մինիստրության համակարգում գործել է ընդամենը 207 կապալային բրիգադ[33], որը գրեթե հինգ անգամ քիչ է պլանով նախատեսվածից[34]։ Ըստ պլանի, 1986 թ. սկզբին այս նույն մինիստրության համակարգում միայն կապալային բրիգադների թիվը պետք է կազմեր 1506, բայց այդ ժամանակ կապալով աշխատում էին 945 բրիգադ և օղակ[35]։ Դա բացատրվում է ոչ միայն կոլեկտիվ կապալի արմատավորման վատ կազմակերպմամբ, այլև հանրապետության մի շարք շրջաններում օբյեկտիվ նախադրյալների բացակայությամբ։ Այսպես, աշխատանքի կազմակերպման անկարգագիր ձևը հաջողությամբ արմատավորելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման բարձր աստիճան, որը հնարավորություն է տալիս տեխնիկան ամրացնելու ոչ մեծ կոլեկտիվների։ Մեծ նշանակություն ունի նաև որակյալ կադրերի առկայությունը, որը թույլ է տալիս ոչ միայն կատարողական, այլև ղեկավարման ֆունկցիաների զուգակցումը քանակով ոչ մեծ կոլեկտիվներում։ Կոլեկտիվ կապալի տարածման գործում քիչ դեր չի խաղում պետության հետ տնտեսությունների հարաբերություններում տնտեսավարկի սկզբունքների վերականգնման պրոցեսը գյուղում, գյուղատնտեսության աշխատողների աշխատանքի վարձատրման համակարգի կատարելագործումը։

Վերը շարադրածից կարելի է եզրակացնել, որ կոլեկտիվ կապալի արմատավորումը գյուղատնտեսական արտադրության մեջ հաջող կընթանա այն դեպքում, երբ հանրապետության կուսակցական կազմակերպությունները

---

30 «Коммунист», 18. VII. 1985.

31 Նույն տեղում։

32 «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1984, № 5, էջ 7։

33 «Коммунист», 15. VIII. 1985.

34 Նույն տեղում։

35 ԳՄԲԱ։

կընդօրինակեն առաջավոր շրջանների կուսկազմակերպությունների այդ ուղղությամբ ձեռք բերած դրական փորձը, տեղայնացնելով այն։

11-րդ հնգամյակի արդյունքները ցույց տվեցին, որ հանրապետության գյուղատնտեսության աշխատողները հաջող աշխատանք են կատարում պարենային ծրագրի իրագործման ուղղությամբ։ Կոլտնտեսությունների և սովխոզների արտադրության մեջ կոլեկտիվ կապալի արմատավորումը բարենպաստ պայմաններ կստեղծի կուսակցության առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու համար։

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАРТИЙНЫХ ОРГАНИЗАЦИИ РЕСПУБЛИКИ ПО ВНЕДРЕНИЮ И УКРЕПЛЕНИЮ КОЛЛЕКТИВНОГО ПОДРЯДА В СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОМ ПРОИЗВОДСТВЕ

АШОТ ЕНГОЯН

Резюме

Одним из эффективных путей интенсификации сельскохозяйственного производства является широкое внедрение коллективного подряда. Практика внедрения этой передовой формы организации и стимулирования труда показала, что коллективный подряд активно распространяется и эффективно действует особенно тогда, когда получает серьезную поддержку райкомов партии, первичных партийных организаций. Существенную роль в этом направлении играют районные агропромышленные объединения. Внедрение коллективного подряда способствует повышению естественности и самостоятельности трудовых коллективов в решении хозяйственных задач, развитию самоуправления в них; повышает заинтересованность членов коллективов в производительном труде; активизирует человеческий фактор—каждый на своем месте работает добросовестно и с полной отдачей.